

A decorative horizontal border element consisting of a repeating pattern of stylized letters and floral motifs. The letters appear to be 'S' and 'P' shapes, each decorated with a cross and a small flower at the top. The entire border is rendered in a dark, textured style.

ՅԱԿՈՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

સુરત કાન્દીયાં

Բնսկան օրէնք է մարդկութեան իւր ազգը
սիրել, և իւր ազգին ծառայել կամ գոնէ ծառայե-
լու աշխատին ալ ամեն մէկ անձին վրայ սրբազն պար-
տաւորութիւն մըն է : Աս պարտաւորութիւնը վորքը
՚ի շատէ ճանաչելովնիս, և ներկայ դարուս լուսա-
ւորեալ ազգաց յառաջադիմութեան աւելի ազգութիւ-
նոցներէն մէկը ըսպրոց ընթերցանութիւնը ըլլարուն
համոզուած ըլլալովնիս, ամենասիրելի ազգիս կար-
եօք չափ ծառայելու փափաքանօք՝ ասկէ մէկուկէս
տարի առաջ Նոյեմբեր Աղունէ շաբաթագիրը հրատարա-
կելու ձեռք զարկինք, կարծելով միանգամայն որ մեր
ազգն ալ ուրիշ լուսաւորեալ ազգաց յառաջադիմու-
թեան շաղին հետեւելու կը փափաքի :

Այսպիսի ձեռնարկութեան մը բազմադիմի գըժ-
ուարութիւնները մեզի անծանօթ չէին, բայց անոնց
յաղթելն ալ դիւրին բան մը կը համարէինք . ինչու որ
Մեծազօր Տէրութեան շնորհօք՝ մեր անձնական օ-
գուտը վինտուելու կարօտ ըլլալով, և ազգին օգուտաէն
զատ նպաստակ մը չունենալով, կողմնասէր ըլլալու և
այս կամ այն կուսակցութեան ծառայելու և վնա-
սակար շողոքորթութիւն ընելու ալ ստիպուած չէինք:
Ուստի շահախնդրութենէ և կողմնասիրութենէ ա-
զատ ըլլալովնիս, կինայինք առանց արգելքի պաշտպա-
նել սիրելի ազգերնուա օգուտաները, և հետեւա-
բար յարգոյ ազգայնոց համակրութեանը արթանանա-
լու յասերնիս հաստատ էր:

Ուրախ եմք ըստելու , որ այս յօյսերնիս պարագար
չելաւ . և գտնուեցան բաւական ուսումնասեր ու
գիտնական անձներ որոց պաշտպանութեամբ՝ առաջին
տարին Ներ Շահնշահին ժամանակին եւ աշխարհովենէն առելը բա-
ճը վէ իրացնուելը , գոհութեամբ շարունակեցինք մեր
ձեռնարկութիւնը :

Եւ թէպէտ, ինչպէսոր յարգց հաստիակութեան
յայտնի է, երկրորդ տարւոյն սկիզբէն՝ այսինքն մարտ
ամէն հետէ Բարձրագոյն դռւոք ունեցած զբաղ-
մունքնիս աւելի ծանրանալում մեղի բաւական ժամա-
նակ չէին տար, Կայա Առաջանայ կանոնաւոր հրամարակ-
մանը պէտք եղած հոգաաւարութիւնը ընելու, բայց
և այնպէս մեր աղդասիրութիւնը և աղդասէր աղա-
ներուն կողմէն մեղի ցուցուած համակրութեան
համար մեր երախտագիտութիւնը ստիպեցին զմելզ
մեր հանգստեան համար մնացած կարճ ժամերն ալ-
զոհելու, քան թէ ՚ի մէր աղդիս մեր յանձնառու ե-
ղած ձեռնարկութիւնը անկատար ճգելու :

Բայց երբոր տեսանքը որ քանի մի ազգահերձանչութեանցուած երեւելիք օտարասիրութեանէ սնոտի պատիւ սպասելով, կամ թէ ազգին թշնամիները սիրելը ազգասիրութիւն համարելով, ապկերախտ օտարացեալներուն առատ ձեռնատուութիւններ կ'ընեն և սյապիսի ձեռնատուութիւնները հայ ուստի մնականաց ընելը աւելի պատուարժան և օգտակար է ըսելնուս համար՝ յիշեալ երեւելիները սրանեղելով մինչեւ անգամ Նոյեան Առանուաց առաջին և երկրորդ տարուան ըստորագրութեան գինը չի վճարելու բարեհաջողութեան ։

Եղբար տեսանկը որ աղդիս բարյական վիճակին
խղճութիւնը օրինաւոր ապացոյցներով յարդ ոյ հա-
սարակութեան իմացունելնուս և նցնցաւալի վիճակը
լսւցընելու միջնուրը ձեռք բերելու յուսով՝ անսա-
րաւ աղդասիրութեամբ զիւրակասար առաջարկու-
թիւններ ընելնուս համար՝ «Տան իրենց սէպան պաշ-
տօնին համեմատ՝ աղդիս վրայ խղճալու և ժամանա-
կիս յարմար բարի տնօրինութիւններ ընելու տեղը՝
չեմք գիտեր ի՞նչ անիմանալի խղճիւ սրտնեղելով՝
մինչեւ անդամ իրենց ձեռք չի հաստատուած՝ Եւ-
շան վասնայ, հրատապակումը (եթէ գժբաղդաբար
ձեռքերնուն գար) խափանելու անյաջող խորհուրդ-
ներ բրին .

Երբոր տեսանք որ մեր ՚ի սեր ազգիս յանձնառու եղած ծանր և անշահախնդիր աշխատութիւնն իս այսպէս օրէ օր կը դառնանար և թանկապին ժամննակնուս կորուսոր և մեր քաշած անհանդսութիւնները պարապը ելլելէն վատ՝ անոնցմէ ու ելի նիւթական կորուսաներ այ բներու սկսանք (ինչու որ

Այս ժամանակ աւելի ընտիր համարեցինք շաբաթադրիս հրատարակումը մեր յօժար և ազատ կամօքառ այժմ՝ դադրեցնել, քանի թէ առաջադրուած եռամեայ պայմանաժամը լրացընելու աշխատելով՝ մեր վկասները ծանրացընել:

Եթէ այս որոշումնիս, այսինքն ապերախտութեան ծառայելու անձնանութիւնը եւ քաշուելնիս ախտաալու պատճառ մը ունիմք, միայն ան է որ ձշմարիտ ազգասէր ամիրաներու և աղաներու կողմէն մեզի ցուցուած համակրական սիրոյն փոխարէն բաւական չնորհակալութիւն չի կրցանք ցուցընել, և Նշան Շահնշահն չի դադրեցընելուս համար ըրած փափանին չի կրցանք կատարել:

Այսպիսի արժանագով անձինքներէն խոնարհաւ բար ներսղամնութիւն խնդրելով, կ'աղաքէմք որ իշխնց ավգասիրական ձեռնտուութիւնը միւս ազգային լատրոնց յարատեւութեանը համար չի խնայեն, և անոնց օգուտաը չի ճանչցողներուն ալ ճանչցունելու ինաւիք տանին : Այս վերջիններն ալ թողթարեհածին մասելու թէ առ այժմ միայն լատրոնց միշոցաւ մեր աղգին վիճակը լաւանալու յոյս կայ և լրագրասպեսաց աշխատանքն ու ծախքը (մենք փորձուի գիտենք և կը խտառովանիմք) խիստ ծանր են, և թէ երբեք մենք որ՝ լրագրէն ապրուատ ճարելու

Հոգը չունենալով մեծ վնաս ըրմէք, ո՞րչափ առելի օդնութեան կարօտ են այն աշխատասեր լագրագեաւները որ անսակ իրենց ապրուսոն ալ պիտի հոգան :

ստորագրողներուն ժամանցանով՝
Այսունցիւ կան առանք որ աստրեկան ստորագրութեան
գինը վճարած են ու միայն վեց ամսուան լազիր ըս-
տացած են, շատեւ ալ կան որ վեց ամսուան լազիր ըս-
տացած են՝ ու ամեննեւին ստակի մը վճարած չեն.

ինչպէս որ տարեկան վճարողները վեց ամսական դրամը ետ պահանջելու կամ նոյն ժամանակուան համար լրագիր մը տանալու իրաւունքը ունին, այնպէս ալ ամենեւին ստակ չի վճարողները՝ բանուած վեց ամսոց ստորագրութեան գինը հասուցանելու պարագաւոր են:

Այս մասին Ուստի պատուական լրագրին յարդց
խմբագիր՝ Տ'եօրէնին հետ կարգադրութիւն մը ը-
րած ըլլալով՝ Արյեան Ըլլանոց տարեկանը վճարող յար-
գելիները կը հրաւելիք մը որ իրենց անդորրագիրը զըր-
կեն Վալիակ խանի վերի դին Խմբրլէր խանը Արյեան
Ըլլանոց տպարանը Պարոն Ասուբէն Տիւրքձեւանին
զուցընեն և այն տեղ իմացունեն թէ չլբանուած
վեց անոց համար ստակնին ետ կ'ուվե՞ն կամ թէ
Արյեան Ըլլանոց տեղ Ուստի լրագիրը ընդունելու կը
բարեհաջի՞ն:

Որովհետեւ այս հրաւաէլքնիս մեր վկասննըը ծանրացունելու է, արդար իրաւամբ կը պահանջեմք որ Կոյշեան Աշունոյ ստորագրութեան գինը չի վճարողները բանուած վեց ամսականը հասուցանեն. իսկ անոնք որ Վասէն լրագրին ստորագրուած չեն ու կը հաճին ընդունելու զայն Կոյշեան Աշունոյ տեղ, թող մնացեալ վեց ամսոց համար յիշեալ պատուական լրագրիը ընդունին ու տարեկանը անորյարդույ խմբագրին վրարեն. : Այսպիսիներուն քանի մի օրէն վեցամսեայ անողորագրիր պիտի զրկեմք, և կը ինտրեմք որ կամ անմիջապէս վճարեն զայն, և կամ մնացեալ վեց ամսոց համար Վասէն ստորագրուելով, տարեկանը անոր խմբագրին վճարելու յանձնուու ըլլալնին իննացունեն, կը յուասամք որ այս իրաւացի պահանջմունքնիս արդաշ բասիրութեամբ կը կսառարեն, և մ-կ կսոմ միւս կերպիւ պարագերնին վճարել ըստվերով՝ անուննին հրատարակելու և վագնանքնին բարեմիտ աղգին դասողութեանը յանձնելու ցաւալի պարաւաւորութեան մէջ էն թողուր զմեց :